ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 76-Լ

«12» 09 2023 թ. քաղաք Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գևորգ Վաղարշակի Գևորգյանին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի պաշտոնին փոխադրելու և Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Վիգեն Հայկի Միլիտոնյանին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնին փոխադրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի սեպտեմբերի 7-ի համապատասխանաբար՝ N 395-Ա և N 394-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Գ.Գևորգյանի կողմից՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Վ.Միլիտոնյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Ավագյան Եղիազար - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Ստեփանյան Կարեն -	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Մանուկյան Լիաննա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետ,
Սարգսյան Քրիստինե -	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 25-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ